# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 20.05.2017 թվականի թիվ 14-Ն և 15-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ` jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» մայիսի 2017 թվականի N 14-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5 -րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից Ջրաշեն համայնքի ավագանին`

*որոշում է.*

Համայնքի 2017 թվականի բյուջեի 06 բաժնի 04 խմբի 01 դասի 900242811016 հաշվի 5112 հոդվածով նախատեսված 4000.0 հազար դրամ (փողոցների լուսավորում) գումարից 1400.0 հազար դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 01 դասի 900242211028 հաշվի 5121 հոդված (տրանսպորտային սարքավորումներ):

-01 բաժնի 01 խմբի 01 դասի 900242211028 հաշվի 5121 հոդվածի (տրանսպորտային սարքավորումներ) նախատեսված 3-րդ և 4-րդ եռամսյակի ծախսերը տեղափոխել նույն հոդվածի ծախսերի կատարման 2-րդ եռամսյակ:

-04 բաժնի 05 խմբի 01 դասի 9002422710222 հաշվի 5113 հոդվածով (ճանապարհային տրանսպորտ) նախատեսված եռամսյակային ծախսերի բաշխման ժամանակացույցը (1-ին եռամսյակ 14000.0 հազար դրամ, 2-րդ եռամսյակ 16500.0 հազար դրամ, 3-րդ եռամսյակ 19200.0 հազար դրամ, 4-րդ եռամսյակ 21000.0 հազար դրամ) փոփոխել ըստ եռամսյակային բաշխման` 1-ին եռամսյակ 12500.0 հազար դրամ, 2-րդ եռամսյակ 12500.0 հազար դրամ, 3-րդ եռամսյակ 17200.0 հազար դրամ, 4-րդ եռամսյակ 21000.0 հազար դրամ:

Ֆինանսական ծախսերի կատարման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ:

| Համայնքի ավագանու անդամներ` | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | [signature] | | |
| 2.Ջավեն Տոնիկյան | [signature] | | |
| 3.Կարապետ Ոււռույան | [signature] | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | [signature] | | |
| 5.Մացակ Ոււռույան | [signature] | | |
| 6.Ժորա Մկրտչյան | [signature] | | |
| 7.Սպարտակ Թումասյան | [signature] | | |
| 8.Բենիկ Զարգարյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` [signature] Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20 » մայիսի 2017 թվականի N 15 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, .Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Ջավեն Տոնիկյան | | | |
| 3.Կարապետ Ուռուսյան | | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 5.Մացակ Ուռուսյան | | | |
| 6.Ժորա Մկրտչյան | | | |
| 7.Սպարտակ Թումասյան | | | |
| 8.Բենիկ Զարգարյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ջրաշեն համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 20-ի N 15-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Ռոզա Սասունի Սաֆարյանին -20.0 հազար դրամ: (երեխայի ծննդյան գումար):

2.Ռոզա Էդուարդի Վարդանյանին - 100.0 հազար դրամ: (վիրահատության գումար):

3.Հրանտ Ազատի Դավթյանին-100.0 հազար դրամ: (հուղարկավորման գումար):

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 220.0 հազար դրամ:

ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ